Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1231 - Ն որոշման

Ձև

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՄՅՈՒՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱԴՐՎՈՂ՝ ՀՍԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՀՊԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ

NN ը/կ	Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունը	Լիազորված մարմնի կողմից տրված՝ կազմակերպության գրանցման համարը	Կազմակերպության անվանումը (անձի անունը, ազգանունը)	Տարածքը (մարզը, գավառը, նահանգը ազգությունը, համայնքը)	Կազմակերպության գտնվելու վայրը (անձի բնակության վայրը)	Գործունեության տեսակը	Կազմակերպության անասնաբուժասանիտարական կարգավիճակը (թույլտվություն/ժամանակավոր սահմանափակում /ուժեղացված վերահսկողություն)	Ռեեստրում կազմակերպության (անձի) ընդգրկման հիմքը (սահմանափակումների կիրառում/ հանում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1231 - Ն որոշման

Ձև

Օ Բ Ի Ն Ա Կ Ե Լ Ի Ձ Ե Վ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ՀՍԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ

NN ը/կ	Ներմուծող երկիրը	Լիազորված մարմնի կողմից տրված՝ կազմակերպության գրանցման համարը	Կազմակերպության անվանումը (անձի անունը, ազգանունը)	Տարածքը (մարզը, գավառը, նահանգը, ագարակը, համայնքը)	Կազմակերպության գտնվելու վայրը (անձի բնակության վայրը)	Գործունեության տեսակը	Կազմակերպության անասնաբուժասանիտարական կարգավիճակը (թույլտվություն/ժամանակավոր սահմանափակում/ուժեղացված վերահսկողություն)	Ռեեստրում կազմակերպության (անձի) ընդգրկման հիմքը (սահմանափակումների կիրառում/ հանում)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1231 - Ն որոշման

Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ՝ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ (ՀՍԿՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՀՊԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ

1. Սույն ընթացակարգով կարգավորվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ անասնաբուժական վերահսկման (հսկման) ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրի (այսուհետ՝ ռեեստր) ձևավորման և վարման և ռեեստրում պարունակվող տեղեկատվության տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Անասնաբուժության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազոր մարմին), ռեեստրում պարունակվող տեղեկատվությունն ուղարկում է Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին՝ այն Եվրասիական տնտեսական միության արտաքին և փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ ինտեգրված տեղեկատվական համակարգ) տեղադրելու համար:

3. Ռեեստրը ձևավորվում է լիազոր մարմնի կողմից՝ ապահովելով Եվրասիական տնտեսական միության և լիազոր մարմնի պաշտոնական կայքերից ռեեստր մուտքի հնարավորությունը:

4. Ռեեստրի ձևավորման և վարման ժամանակ ռեեստրում պարունակվող տեղեկատվությունն ապահովվում է չթույլատրված մուտքի պաշտպանությամբ:

5. Ռեեստրը վարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 30-ի N 1231 - Ն որոշմամբ հաստատված օրինակելի ձևով:

6. Տեղեկատվությունը ռեեստր մուտքագրվում, փոփոխվում, այդ թվում՝ հանվում է՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ անասնաբուժական վերահսկողության ենթակա օբյեկտների համատեղ ստուգումների, ապրանքների նմուշառման իրականացման, Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների և երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրների վարման միասնական կարգերի:

7. Լիազոր մարմինը տեղեկատվությունը ռեեստրում ներառելու կամ դրանում փոփոխություն կատարելու մասին որոշում ընդունելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում (ոչ ուշ) համապատասխան տեղեկատվություն է ուղարկում Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին, կողմերի լիազոր մարմիններին և արտահանող երկրի լիազոր մարմնին:

8. Ռեեստրում պարունակվող տեղեկատվությունը, շահագրգիռ անձանց հարցման հիման վրա, տրամադրում է լիազոր մարմինը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2014 թվականի
հոկտեմբերի 30-ի N 1231 - Ն որոշման

Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր

ՀՍԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ ԵՎ (ԿԱՄ) ՊԱՀՊԱՆՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Ռեեստրները ձևավորվում և ներդրում են Եվրասիական տնտեսական միության քարտուղարության կողմից՝ երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստր և Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների ռեեստր վարելու լիազորություն ունեցող Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների արտադրանքի անվտանգության հսկողության և վերահսկման նպատակով՝ հետևյալ մարմինների հետ համատեղ՝

1) Բելառուսի Հանրապետությունից՝ Բելառուսի Հանրապետության գյուղատնտեսության և սննդի նախարարություն.

2) Ղազախստանի Հանրապետությունից՝ Ղազախստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն.

3) Ռուսաստանի Դաշնությունից՝ Անասնաբուժական և ֆիտոսանիտարական հսկողության դաշնային ծառայություն.

4) Հայաստանի Հանրապետությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին:

2. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին յուրաքանչյուր անգամ առաքվող տվյալը պարունակում է հետևյալ ֆայլերը՝

1) երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրում պարունակվող տեղեկատվությամբ ֆայլ՝ համաձայն N 1 ձևի.

2) Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների ռեեստրում պարունակվող տեղեկատվությամբ ֆայլ՝ համաձայն N 2 ձևի.

3. Լիազոր մարմնի՝ կազմակերպությանը ռեեստրում ներառելու (ընդգրկելու) սահմանափակումները հանելու մասին դիմումը Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին է ներկայացվում տվյալ ձևերի ֆայլերով՝ բաղկացած «nXXYYYYMMDDhhmmss.xis» ծածկագրից, որում տառերի նշանակությունը հետևյալն է՝

1) n՝ ձևի տեսակ՝

ա. I-ն Եվրասիական տնտեսական միության անդամ մի պետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետության տարածք փոխադրվող՝ հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրի ձևն է (N 2 ձև),

բ. e-ն Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող՝ հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրի ձևն է (N 1 ձև).

2) XX-ը Եվրասիական տնտեսական միության անդամ պետության տառային ծածկագիրն է՝

ա. BY՝ Բելառուսի Հանրապետություն,

բ. KZ՝ Ղազախստանի Հանրապետություն,

գ. RU՝ Ռուսաստանի Դաշնություն,

դ. AM՝ Հայաստանի Հանրապետություն,

3) YYYY-ն տվյալների ֆայլի ստեղծման տարվա չորս թվերն են.

4) MM -ը տվյալների ֆայլի ստեղծման ամիսն է՝ թվերով.

5) DD -ն տվյալների ֆայլի ստեղծման ամսվա օրն է՝ թվերով.

6) hh – ն տվյալների ֆայլի ստեղծման ժամն է.

7) mm -ը տվյալների ֆայլի ստեղծման րոպեն է.

8) ss -ը տվյալների ֆայլի ստեղծման վայրկյանն է:

4. Կազմակերպությունը ռեեստրում ընդգրկելու (գրանցելու) սահմանափակումները հանելու համար հիմք հանդիսացող տվյալների ֆայլի լուսապատճենի անվանումը համապատասխանում է կազմակերպության գրանցման համարին, որը տրվել է լիազոր մարմնի կողմից:

5. Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին ուղարկվող բոլոր ձևերի ֆայլերը Excel 97- 2003 (xls ընդլայնում) ձևաչափի են: Տվյալների ֆայլը պարունակում է մեկ թերթի վրա տեղավորվող տվյալներ (sheet 1): Բոլոր տվյալները (լրացված դաշտերը) «տեքստային» ձևաչափի են: Ռեեստրի յուրաքանչյուր գրանցմանը համապատասխանում է միայն մեկ տող: Ռեեստրի յուրաքանչյուր սյունակին համապատասխանում է մեկ վանդակ՝ տվյալ տողում: Ֆայլի առաջին տողը պարունակում է սյունակների անվանումները: Տվյալների ֆայլ պատրաստելիս՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել MS Excel 97 - 2003-ի գրքի ձևաչափի սահմանափակումներին (էջում տողերի առավելագույն թիվը՝ 65536, վանդակում սիմվոլների առավելագույն թիվը՝ 32000):

6. Կազմակերպությունը ռեեստրում ընդգրկելու (գրանցելու) սահմանափակումները հանելու համար հիմք հանդիսացող տվյալների ֆայլի լուսապատճենները *.pdf ձևաչափով են, գրաֆիկայի թույլտվությունը մեկ դյույմում՝ 120 կետ: Յուրաքանչյուր ֆայլ պարունակում է այնքան էջ, որքան վերաբերում է մեկ հիմքին՝ կազմակերպությանը ռեեստրում ընդգրկելու (գրանցելու) սահմանափակումները հանելու համար:

7. Փոփոխությունների փաթեթով ֆայլերն ուղարկվում են երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրում և (կամ) Եվրասիական տնտեսական միության

կազմակերպությունների ռեեստրում փոփոխություններ կատարելու պահից ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Բոլոր տվյալները Եվրասիական տնտեսական միության հանձնաժողով են ուղարկվում էլեկտրոնային փոստով՝ հետևյալ հասցեով՝ stat@tsouz.ru:

9. Ֆայլերն ուղարկվում են արխիվացված տեսքով (WinZip, WinRar): Արխիվի անվանումը պարունակում է թարմացումը կատարող լիազոր մարմնի անվանումը, թարմացման փաթեթի հերթական համարը և անգլերեն այբուբենի տառ՝ թվայնացման ծավալը մեծացնելու համար (օրինակ՝ BYBST_A000000001): Թարմացումների փաթեթի արխիվներում առկա է մեկական ֆայլ՝ *.Exls ձևաչափով (երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրի տեղեկատվությամբ կամ Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների ռեեստրի տեղեկատվությամբ), և կազմակերպությունը ռեեստրում ընդգրկելու (գրանցելու) սահմանափակումները հանելու համար հիմք հանդիսացող տվյալների լուսապատճեններով ֆայլեր՝ *.pdf ձևաչափով: Էլեկտրոնային փոստի նամակի թեմայում (subject) նշվում են ռեեստրի տեսակը («Երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստր», «Եվրասիական տնտեսական միության կազմակերպությունների ռեեստր»), թարմացումների փաթեթի ձևավորման ամսաթիվը, ժամը և տվյալներն ուղարկող երկրի ու լիազոր մարմնի անվանումները:

10. Տվյալների հետ միասին ներկայացվում է տեքստային ֆայլ, որում տեղեկացվում է, թե ինչպիսի տվյալներ են ուղարկվում ու ինչ ժամկետներում, և ռեեստրի գրառման միավորների թվի ստուգող նշանակությունը (բեռնաթափման տեղական մատյան): Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի ղեկավարը հաստատում է տվյալների առաքումը և համեմատում է գրանցամատյանի գրառման միավորների թիվը ԱՓԱ ԻՏՀՆՏԻ (НСИ ИИСВВТ) մոդուլում գրանցման միավորների թվի նշանակության հետ: Ներբեռնման արդյունքում ղեկավարը կամ տեղեկացնում է ուղարկման ժամանակ թույլ տրված սխալ-

ների մասին և խնդրում մեկ անգամ ևս ուղարկել տվյալները, կամ հաստատում է բարեհաջող ներբեռնումը:

11. Լիազոր մարմինը սույն տեխնիկական կանոններն ուժի մեջ մտնելուց հետո երեսուն օրվա ընթացքում Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին է ներկայացնում պատասխանատու կոնտակտային անձանց ցուցակները: Լիազոր մարմինը երեք աշխատանքային օրվա ընթացքում Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովին տեղեկացնում է պատասխանատու կոնտակտային անձանց ցուցակում կատարված ցանկացած փոփոխության մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Դաշտի համարը	Դաշտի անվանումը	Դաշտի անվանումը
1.	NN	№
2.	TP	Արտադրանքի տեսակը
3.	KS	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն (Բելառուսի Հանրապետություն՝ BY,Ղազախստանի Հանրապետություն՝ KZ, Ռուսաստանի Դաշնություն՝ RU, Հայաստանի Հանրապետություն՝ AM)
4.	RC	Լիազորված մարմնի կողմից տրված՝ կազմակերպության գրանցման համարը
5.	NC	Կազմակերպության անվանումը
6.	RC	Տարածքը (մարզ, գավառ, նահանգ, ագարակ, համայնք)
7.	AC	Կազմակերպության գտնվելու վայրը
8.	BC	Գործունեության տեսակը
9.	SC	Կազմակերպության անասնաբուժասանիտարական կարգավիճակը (թույլտվություն/ ժամանակավոր սահմանափակում/ուժեղացված վերահսկողություն)
10.	BC	Ռեեստրում կազմակերպության ընդգրկման հիմքը (սահմանափակումների կիրառում/ հանում)

Ձև N 2

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՁԱՆՑ ՌԵԵՍՏՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Դաշտի համարը	Դաշտի անվանումը	Դաշտի անվանումը
1.	NN	№
2.	TP	Արտադրանքի տեսակը
3.	KS	Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն (Բելառուսի Հանրապետություն՝ BY,Ղազախստանի Հանրապետություն՝ KZ, Ռուսաստանի Դաշնություն՝ RU, Հայաստանի Հանրապետություն՝ AM)
4.	RC	Լիազորված մարմնի կողմից տրված՝ կազմակերպության գրանցման համարը
5.	NC	Կազմակերպության անվանումը
6.	RC	Տարածքը (մարզ, գավառ, նահանգ, ագարակ, համայնք)
7.	AC	Կազմակերպության գտնվելու վայրը
8.	BC	Գործունեության տեսակը
9.	SC	Կազմակերպության անասնաբուժասանտարական կարգավիճակը (թույլտվություն/ ժամանակավոր սահմանափակում/ուժեղացված վերահսկողություն)
10.	BC	Ռեեստրում կազմակերպության ընդգրկման հիմքը (սահմանափակումների կիրառում/ հանում)